ՀԱՆԳԻՍՏ Տ. ՄԿՐՏԻՉ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ

1979 թվականի հունվարի 28-ին վախճանվեց տ. Մկրտիչ ավագ քահանա Մը-կըրտչյանը, որը ավելի քան 60 տարի անշահախնդիր նվիրումով ծառայել է իր ժողովրդին և իր եկեղեցուն, սիրված և հարգված բոլորից, որպես ազնիվ և բարի քահանա:

Հանգուցյալ տեր հայրը ծնվել է 1898 թվականին Ապարանի շրջանի Ծաղկաշեն գյուղում (նախկին Թաքարլու): Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական յոթնամյա դպրոցում: Մանկուց սիրել է հոգևոր ասպարեզը, սաղմոսն ու շարականը և հետագայում իր ողջ կյանքը նվիրաբերել իր եկեղեցու սպասավորության գործին:

1918 թվականին քահանա է ձեռնադրվել՝ ձեռամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Խորեն արքեպ. Մուրադբեկյանի և պաշտոնավարել իր ծննդավայրում:

1932 թվականին Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի կարգադրությամբ հրավիրվել է Մայր Աթոռ ս. Էջմիածին և պաշտոնավարել որպես ծխական քահանա:

Հետագայում, իր նվիրված աշխատանքի համար, արժանացել է ծաղկյա փիլոնի, ավագության կոչումի և լանջախաչի:

1978 թվականին Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, հիվանդության և առաջացած տարիքի պատճառով, անցել է հանգստյան:

1979 թվականի հունվարի 30-ին, երեքշաբթի օրը, ս. Գայանե վանքում կատարվել է հանգուցյալ տ. Մկրտիչ ավագ քահանայի վերջին օծումն ու թաղման կարգը՝ ձեռամբ



Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի: Սրբազան հայրը իր հուզիչ և գեղեցիկ դամբանականով վեր է հանել հանգուցյալ տեր հոր նվիրյալ կյանքը, նախանձախնդրությունն ու եկեղեցասիրությունը՝ որպես կատարյալ օրինակ ներկայիս երիտասարդ հոգևորականներին:

Հանգիստ և խաղաղություն տ. Մկրտիչ ավագ քահանայի ոսկորներին:

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: